ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԲԱԳԱՐԱՆԻ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
ОБЩИНА
с. БАГАРАН

10.12. 2012թ.
գ.Բագարան

№ 075
с. Багаран

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն Ա.Ղահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Կից ներկայացվում է Բագարան համայնքի ավագանու 2012թ.նոյեմբերի26-ի թիվ 7 նիստի որոշումները:

Առդիր ,, 6 ,, թերթ

Բագարան համայնքի ղեկավար Գ.Մարգարյան

11082-12
10 12 2012թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԲԱԳԱՐԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

թիվ 7 նիստ

«26» նոյեմբերի 2012թ. թիվ 1 որոշում

## ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով

*Բագարան համայնքի ավագանին*

ՈՐՈՇՈՒՄ Է՝

31.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բագարան գյուղական համայնքի ավագանու 2012թվականի նոյեմբերի 26-ի թիվ 7 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

32.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ս. Գևորգյան | | | |
| Ա. Գալոյան | | | |
| Վ. Ղազարյան | | | |
| Վ. Մարգարյան | | | |

ԲԱԳԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. Մարգարյան

2010թվականի նոյեմբերի 26
գ. Բագարան

ՀԱՎԵԼՎԱԾ 2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱԳԱՐԱՆ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26 –Ի ԹԻՎ 7
ՆԻՍՏԻ N 01 ՈՐՈՇՄԱՆ

# ՕՐԱԿԱՐԳ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱԳԱՐԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 7 ՆԻՍՏԻ

1. Ավագանու 2012 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 7 նիստի օրակարգի հաստատում.

   /զեկուցող Գ. Մարգարյան/

2. Համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2013 թվականի դրույքաչափերը հաստատելու մասին:

   /զեկուցող Գ. Մարգարյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԲԱԳԱՐԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

---

»26« նոյեմբերի 2012թ.

թիվ 7 նիստ
թիվ 2-ն որոշում

## ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով.

Համայնքի ավագանին որոշում է.

33.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բագարանի գյուղական համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2013 թվականի դրույքաչափերը՝ համաձայն №2 հավելվածի:

34.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ս. Գևորգյան | | | |
| Ա. Գալոյան | | | |
| Վ. Ղազարյան | | | |
| Վ. Մարգարյան | | | |

ԲԱԳԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. Մարգարյան

2012թվականի նոյեմբերի 7
գ. Բագարան

ՀԱՎԵԼՎԱԾ 2
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԲԱԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 7 ՆԻՍՏԻ N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել ՝հիմնական օբյեկտների համար՝
ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 5000 /հինգ հազար դրամ.
բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝
բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 9000 /ինն հազար /դրամ.
բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 /տասնհինգ հազար/ դրամ,
բգ) 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 21000 /քսանմեկ հազար/դրամ.
ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝
գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 600/վեց հարյուր/ դրամ,
դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1200 / հազար երկուհարյուր/դրամ:
2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝
ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների ( այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 300/երեք հարյուր /դրամ.
բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.
գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 2000 /երկու հազար/դրամ:
:4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝
1) ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինություններին ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 'յուրաքնչյուր եռամսյակի համար՝ 3000/երեք հազար/ դրամ
2)ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 3250 /երեք հազար երկու հարյուր հիսուն / դրամ:
5. Համայնքի տարածքում՝
ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ.
բ) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 150000/մեկ հարյու հիսուն հազար/ դրամ:
6 Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներով պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 30000/երեսուն հազար/ դրամ:
7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝
ա) առևտրի օբյեկտների համար՝ 21 000/քսանմեկ հազար /դրամ.
բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000/հիսուն հազար/դրամ.
գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000/երկու հարյուր հազար/ դրամ.
դ) խաղատների կազմակերպման համար՝ 500 000/հինգ հարյուր հազար/ դրամ.
ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 /երկու հարյուր հիսուն հազար/դրամ
զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000/մեկ հարյուր հազար/ դրամ:
8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝
ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000/երկու հազար/ դրամ.
բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500/երկու հազար հինգ հարյուր/ դրամ.
գ) այլ արտաքին գովազդի համար՝ 1000/մեկ հազար / դրամ.
դ) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700/յոթ հարյուր/ դրամ:
9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 1000 / մեկ հազար / դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել5000/հինգ հազար /դրամ:
11. Գյուղապետարանի կողմից մրցույթների և աճուրդների կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար սահմանել մասնակիցներից վճար 1000 / մեկ հազար / դրամ:
12. Գյուղապետարանի տնօրինության տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար մատուցած ծառայությունների դիմաց վճար սահմանել 1000 / մեկ հազար / դրամ:

ԻՐԱՎԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

*Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բագարանի գյուղական համայնքի ավագանու կողմից ընդունված իրավական ակտի նախագծի օրինականության և հիմնավորվածության ստուգման մասին*

ՀՀ Արմավիրի մարզի Բագարան համայնքի ղեկավար Գևորգ Մարգարյանս, ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ստուգեցի ՀՀ Արմավիրի մարզի Բագարան գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 26-ի «Համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2013 թվականի դրույքաչափերի հաստատման մասին» N 2-Ն որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը: Ստուգմամբ պարզեցի, որ տվյալ ակտի ընդունումը պայմանավորված է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի պահանջով:

Ակտի ընդունումն ուղղված է տեղական տուրքերի և վճարների գանձումների միջոցով համայնքի բյուջեն հզորացնելուն և համայնքի զարգացմանը նպաստելուն:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ Արմավիրի մարզի Բագարան գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 26-ի «Համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2013 թվականի դրույքաչափերի հաստատման մասին» N2-Ն որոշումը համապատասխանում է գործող օրենսդրության պահանջներին:

Համայնքի ղեկավար Գ. Մարգարյան